

ք. Երևան

06.12.2021 թ.

Սույն մեկնաբանությունը վերաբերվում է «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) նոր խմբագրությամբ կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) դրույթներին, որոնք վերաբերվում են Խորհրդի անդամի ընտրության համար անհրաժեշտ ձայների քանակին:

Ի սկզբանե նշենք, որ ցանկացած իրավաբանական անձի կանոնադրություն համապարփակ և ամբողջական փաստաթուղթ է, որի յուրաքանչյուր դրույթ կապված է փաստաթղթի այլ դրույթների հետ և չի կարող կիրարկվել որպես առանձին կարգավորվածություն ունեցող նորմ:

Համաձայն Կանոնադրության 7.3 կետի առաջին և երկրորդ նախադասությունների Խորհրդի անդամներն ընտրվում են քվեարկության միջոցով (որի ձևը՝ բաց կամ գաղտնի (փակ) ընտրում է Համաժողովը) համաձայն Կանոնադրության: Ընտրված են համարվում առավել շատ ձայներ հավաքած թեկնածուները:

Կանոնադրության մեկ այլ կետ, մասնավորապես՝ 6.11 կետը սահմանում է, որ Համաժողովը որոշումներ է ընդունում համաժողովին անձամբ կամ լիազորագրով մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, նախ պետք է փաստել, որ որևէ կետ մեկնաբանելիս պետք է հաշվի առնել տվյալ փաստաթուղթը մշակող/հաստատող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող գլխի, բաժնի, կետերի կարգավորման համատեքստից, տվյալ փաստաթղթի դրույթներից, սահմանված սկզբունքներից: Ուստի կարող ենք փաստել, որ 7.3 կետում նշված դրույթը «առավել շատ ձայներ հավաքած թեկնածուներ» պետք է մեկնաբանվի 6.11 կետի լույսի ներքո և որպես դրա շարունակություն, մինևույն համատեքստում և ձայների թույլատրելի սահմանաչափ դիտել «պարզ մեծամասնությունը»:

*«ԼեգալԼաբ» փակ բաժնետիրական ընկերության ավագ իրավաբան*

Մերի Օհանյան

